ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 57
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
27-ը հունվարի 2022թ.

Նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը, որից 5-ը նիստին մասնակցել է zoom.us հարթակով, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարը՝ Մ. Ս. Աթոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մակարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին:

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Միսիթարյան** /

2. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2020-2021 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** /

3. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2020-2021թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի մասնագետ **Է. Ղարայան** /

4. ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգի հաստատում:

/Զեկուցող Որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ **Ն. Գրիգորյան/**

5. Ընթացիկ հարցեր:

5.1. ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Ա. Մարգարյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

/Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան/**

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին՝ «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի վերաբերյալ լսեցենին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** զեկույցը:

Մ.Մխիթարյանը մանրամասն՝ ըստ հոդվածների, ներկայացրեց 2021թ. կտրվածքով ԵՊՀ ԻՄ-ի դրամական միջոցների մուտքերը (եկամուտներ) և ելքերը (ծախսեր): Նա նշեց, որ, ունենալով դրամական մուտքերի որոշակի աճ, համենայն դեպս բոլոր հոդվածներով Մասնաճյուղը աշխատել է խնայողություններով:

Մասնավորապես Մ. Մխիթարյանը նշեց, որ նախատեսված 493 100,5 հազար դրամ եկամուտի փոխարեն ունեցել ենք 523 621,3 հազար դրամ եկամուտ, որի գերակշիռ մասը գոյացել է գործառնական գործունեությունից՝ վճարովի ուսուցման ծառայություններից (258 800,0 հազար դրամ) և պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումով (168 994,0 հազար դրամ), դրամաշնորհային ծրագրերից ունեցել ենք 1 715,8 հազար դրամ եկամուտ, իսկ բանկում ավանդ ձևակերպված միջոցներից 60 846,5 հազար դրամ եկամուտ: Դրամական միջոցների հիմնական ելքերը նախատեսված 496 100,0 հազար դրամի փոխարեն եղել է 493 060,0 հազար դրամ, որից հիմնական ծախսերը կազմել են աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարումների ծախսերը՝ 429 161,0 հազար դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 87 տոկոսը, եղել են այլ հիմնական ծախսեր. կրթաթոշակի ծախսերը՝ 9 811,7 հազար դրամ, վճարումներ պետական բյուջե՝ 10 720 հազար դրամ, 9 483,5 հազար դրամ՝ կոմունալ վճարումների ծախսեր, ծառայությունների ձեռքբերման ծախսեր՝ 11 854,0 հազար դրամ: Մ. Մխիթարյանի ամբողջական հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 1-ում:

Որոշվեց.

- **Ընդունել ի գիտություն**:

Օրակարգի երկրորդ՝ «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2020-2021 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Մասնավորապես նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում կրթության որակի բարելավմանն ուղղված գործընթացներից են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները: Առաջին կիսամյակի հարցումներն իրականացվել են փետրվարի 5-20-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների և մարտի 10-25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար, իսկ երկրորդ կիսամյակի հարցումները՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար: Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով: Հաշվետու ուստարվա հարցումներին մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման ուսանողների 34.65%-ը, հեռակա ուսուցման՝ 28%-ը: Ուսանողների մասնակցության ցածր ցուցանիշը պայմանավորված է ուսանողական էլեկտրոնային փոստերի քիչ գործածմամբ:

Հարցման արդյունքների ամփոփմամբ և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման ձևերում ամենաբարձր ցուցանիշներն ունեն տնտեսագիտության ֆակուլտետի դեկանատը և ֆակուլտետն ամբողջությամբ, իսկ ամենացածրը՝ բնական գիտությունների ֆակուլտետը և նրա դեկանատը:

Իրականացված հարցումների արդյունքներով դասախոսական կազմի՝ 2020-2021 ուստարվա տարեկան միջին գնահատականը կազմել է 4.71: Անհատական ցուցանիշները, ըստ կարգի, տրամադրվել են ֆակուլտետների դեկաններին՝ քննարկելու և վերլուծելու:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների կողմից կատարված հիմնական առաջարկները հետևյալն են.

- դասերն իրականացնել առկա,
- հաշվի առնել ուսանողների կողմից գնահատված հարցման արդյունքները,
- ավելացնել գործնական պարապմունքների ժամաքանակը:

Ա. Դավթյանի զեկույցը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, ուսանողներ Մ. Ասիլյանը, Հ. Թամամյանը, Գ. Խաչատրյանը և այլոք:

Ընդհանուր առմամբ նրանք կարևորեցին այն հանգամանքը, որ փոքրաթիվ ուսանողներ են մասնակցում հարցումներին, որը հնարավորություն չի տալիս ստանալ իրավիճակի օբյեկտիվ գնահատական։

Ուսանողները դա պայմանավորել են այն հանգամանքով, որ ուսանողների մեծ մասը մտածում են, որ դասախոսները կիմանան, թե ովքեր են քվեարկել և հետևաբար կփոխեն իրենց վերաբերմունքը ցածր գնահատած ուսանողների նկատմամբ, մի մասն էլ չեն օգտվում կամ քիչ են օգտվում համալսարանի կողմից հատկացված էլեկտրոնային հասցեներից և ժամանակի ընթացքում մոռանում են գաղտնաբառերը։

Ռ. Բարխուդարյանը նշեց, որ նույն խնդիրը կա նաև ԵՊՀ-ում, քիչ ուսանողներ են մասնակցում հարցումներին, նա շեշտեց նաև, որ դասախոսները հաստատ չեն կարող իմանալ, թե ովքեր են գնահատել իրենց, որովհետև ծրագիրը դա թույլ չի տալիս։ Իսկ Մ. Օթարյանը և Ա. Դավթյանը նշեցին, որ հարցումները կարող են կազմակերպել նաև ուսանողները։

Որոշվեց.

- **Ընդունել ի գիտություն**

***<u>Օրակարգի երրորդ</u>*՝** «ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2020-2021թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի մասնագետ **Է. Ղարայանի** հաղորդումը։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կարևոր խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին բավարարող, բարձր որակավորում ունեցող շրջանավարտներ պատրաստելը։ Իր կրթական գործունեության ընթացքում մասնաճյուղը մշտապես կարևորել է արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները՝ դրանք հավաքագրելով ամենամյա իրականացվող հարցումների միջոցով։ 2011 թ.-ից իրականացվող այդ հարցումները թույլ են տալիս ժամանակին ու պատշաճ արձագանքել գործատուների պահանջներին։ Վերջին 4 տարիներին հարցումն իրականացվում է առցանց, անանուն, հարցմանը մասնակցում են մարզի գործատու կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման

մարմինների ղեկավարները։ 2021 թ.-ին իրականացված հերթական ուսումնասիրության համար էլեկտրոնային հարցաթերթ ուղարկվել է 157 գործատուի, արձագանքել են 70-ը (45%-ը)։

Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտաքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ։ 5 բալանի սանդղակով գործատուները գնահատել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, կազմակերպչական, ստեղծագործական ու հաղորդակցական կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման դրսևորումը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները և այլն:

Հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են, ինչը փաստում է, որ մասնաճյուղը շարունակում է կատարել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է՝ աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ։ Է. Ղարայանի ամբողջական զեկույցը կարող եք տեսնել հավելված 3-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Գ. Ավետիսյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Միքայելյանը և այլոք։

Նրանք նշեցին, որ կատարվել է մեծածավալ աշխատանք և հարցման արդյունքում վերհանված խնդիրների շուրջ լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք կա։

Հարցումներն առավել արդյունավետ իրականացնելու և դրանց արդյունքները նպատակային կիրառելու ուղղությամբ առաջարկներ եղան հարցաշարը հստակեցնելու և կրճատելու, շահակիցների կողմից նկատված խնդիրներին կոնկրետ լուծումներ տալու համար ուսումնասիրության արդյունքները դասակարգելու ըստ առանձին մասնագիտությունների:

Որոշվեց.

- **Ընդունել ի գիտություն:**

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգի հաստատում » հարցի հետ կապված լսեցին որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ **Ն.Գրիգորյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ներկայացված կարգի նախագիծը մշակվել է տնօրենի հանձնարարությամբ՝ ԿԲԴՎ բաժնի կողմից: Կրթական ծրագրերի ղեկավարների գործունեությունը կանոնակարգելու նպատակով բաժինը մշակել է կարգ և ծրագրերի ղեկավարների աշխատանքային պլանի օրինակելի ձև: Կարգի նախագիծը և աշխատանքային պլանը արժանացել են տնօրենության և որակի կառավարման մշտական հանձնաժողովի հավանությանը:

Կարգում ներկայացված են կրթական ծրագրերի ղեկավարներին ներկայացվող պահանջները, նրանց պարտականություններն ու իրավունքները, կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքների մշտադիտարկումն ու հաշվետվողականությունը:

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց.

Որոշում 57/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգը համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - « ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Ա. Մարգարյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2022թ. հունվարի 11-ի թիվ 6 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը, և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի « Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանը 1992թ. սեպտեմբերի 12-ին ընդունվել է աշխատանքի Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ (նախկինում՝ մինչև 1994թ. Իջևանի տարածաշրջանային քոլեջ-համալսարան) որպես լաբորանտ և աշխատել մինչև 01.03.1995թ.-ը, 01.03.1995-16.09.1997թթ. աշխատել է որպես ասիստենտ, իսկ 1997թ. սեպտեմբերի 26-ին ազատվել է աշխատանքից՝ զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ:

Ալեքսան Շամիլի Մարգարյանը առանց ընդհատումների 2000թ. սեպտեմբերի 01-ից առ այսօր որպես հիմնական աշխատակից աշխատում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում:

Ալեքսան Շամիլի Մարգարյանը 01.09.2000-21.02.2003թթ. աշխատել է Բնական գիտությունների ֆակուլտետի «Ընդհանուր ֆիզիկա» ամբիոնում որպես դասախոս, 21.09.2003-03.09.2007թթ.՝ որպես ասիստենտ, 03.09.2007-03.10.2011թթ՝ տնօրենի օգնական, համատեղությամբ՝ ասիստենտ, 03.10.2011-30.06.2014թթ՝ ՈՒսումնամեթոդական վարչության կրթության որակի ապահովման և գնահատման

բաժնի վարիչ, համատեղությամբ՝ ասիստենտ, 10.01.2014-01.07.2014թթ.՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ, համատեղությամբ՝ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, 01.07.2014-01.02.2021թթ.՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ԺՊ, համատեղությամբ՝ ասիստենտ, իսկ 01.02.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՈՒսումնամեթոդական վարչության ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնում որպես տեսուչ, համատեղությամբ՝ ասիստենտ:

Ալեքսան Շամիլի Մարգարյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2014թ.-ին: Նա ունի 18 աշխատանք (1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 12 գիտական, 1 ուսումնամեթոդական հոդված, 4 թեզիս), որոնցից ուսումնամեթոդական ձեռնարկը, 3 գիտական և մեկ ուսումնամեթոդական հոդվածները հրատարակել են թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Փակ գաղտնի քվեարկությամբ՝ 31 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 57/2

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի

պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ